ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

Աշոտ Օսիպյան	**Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն**		15.08.2017թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Հարությունյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ**		15.08.2017թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Բագրատ Ճզմաչյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ**		15.08.2017թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Սարգսյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ**		15.08.2017թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Գալստյան	**Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սուրեն Կարապետյան	**Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Զարուհի Մելքոնյան	**Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ**		15.08.2017թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Հակոբյան	**Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ**		15.08.2017թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- Կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

ԱԿՏԻՎՆԵՐ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Բանկի ակտիվները կազմել են 191,587,220 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 55,889,221 հազ. ՀՀ դրամով կամ 41.2%-ով, իսկ 31.03.2017թ.-ի համեմատ՝ նվազել են 5,174,289 հազ. ՀՀ դրամով կամ 2.6%-ով:

2017 թվականի երկրորդ եռամսյակի ավարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի ակտիվների աճը պայմանավորված է եղել մասնավորապես՝ Հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների՝ 45,791,151 հազ. ՀՀ դրամ կամ 65.9%, Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ 6,815,325 հազ. ՀՀ դրամ կամ 40%, Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվների՝ 1,301,470 հազ. ՀՀ դրամ կամ 199.9%, Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվների՝ 2,537,117 հազ. ՀՀ դրամ կամ 100.6% և Այլ ակտիվների՝ 4,420,671 հազ. ՀՀ դրամ կամ 397.2% աճով:

Նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ ակտիվների գրեթե բոլոր ցուցանիշների կտրուկ աճը պայմանավորված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «Զարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միանալու հանգամանքով, որի արդյունքում 30.06.2017 թվականի ժամանակաշրջանի ակտիվների մնացորդներն արդեն իսկ ներառում են նաև «Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ-ից ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ին անցած մնացորդները:

2017 թվականի երկրորդ եռամսյակի ակտիվների նվազումը նախորդ եռամսյակի համեմատ, հիմնականում պայմանավորված է Կանխիկ դրամական միջոցների և ՀՀ կենտրոնական բանկում մնացորդների՝ 3,723,697 հազ. ՀՀ դրամ կամ 11.2%, Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների՝ 985,174 հազ. ՀՀ դրամ կամ 8.8%,Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ 2,339,629 հազ. ՀՀ դրամ կամ 8.9 %, Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների 166,461 հազ. ՀՀ դրամ կամ 3.2% և Այլ ակտիվների 1,926,723 հազ. ՀՀ դրամ կամ 25.8% նվազմամբ: Միևնույն ժամանակ ակտիվների գրեթե բոլոր ցուցանիշների նվազմանը զուգահեռ աճ է գրանցվել Հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների գծով՝ 3,941,962 հազ. ՀՀ դրամի կամ 3.5%-ի չափով:

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների մնացորդները կազմել են 115,320,629 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 45,791,151 հազ. ՀՀ դրամով կամ 65.9%-ով, իսկ 31.03.2017թ.-ի համեմատ աճել են՝ 3,941,962 հազ. ՀՀ դրամով կամ 3.5%-ով:

Բանկի տրամադրած վարկերը սպասարկվում են պայմանագրերին համապատասխան և դրանց մեծամասնությունը դասակարգված են որպես ստանդարտ վարկեր, որի հիման վրա կարելի է կարծիք կազմել Բանկում վարկային ռիսկի կառավարման բարձր մակարդակի մասին:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին Բանկի վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների մնացորդները կազմել են 23,854,966 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 6,815,325 հազ. ՀՀ դրամով կամ 40.0%-ով, իսկ 31.03.2017թ.-ի համեմատ նվազել են 2,339,629 հազ. ՀՀ դրամով կամ 8.9%-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի կողմից պետական արժեթղթերով կատարված գործառնությունների ծավալը կազմել է 90,770,009 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 57,634,861 հազ. ՀՀ դրամի դիմաց:

Արտարժութային գործառնություններ

Հաշվետու ժամանակահատվածում Բանկի արտարժութային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 206,544.2 հազ. ԱՄՆ դոլար,

ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 64,096.9 հազ. ՌԴ ռուբլի,

Եվրոյով գործարքների ծավալը՝ 7,754,072.0 հազ. Եվրո:

Վերը նշված արտարժութային գործառնություններից հաշվետու եռամսյակում ստացված զուտ եկամուտը կազմել է 216,596 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 117,990 հազ. ՀՀ դրամի դիմաց:

Պարտավորություններ

2017թ.-ի երկրորդ եռամսյակի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 157,472,388 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 44,969,520 հազ. ՀՀ դրամով կամ 40.0%-ով, իսկ 31.03.2017թ.-ի համեմատ նվազել են՝ 5,989,829 հազ. ՀՀ դրամով կամ 3.7%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների՝ 7,853,866 հազ. ՀՀ դրամ կամ 15.8%, Հաճախորդների նկատմամբ պարտավորությունների՝ 36,406,606 հազ. ՀՀ դրամ կամ 62%, Բանկի կողմից թողարկված արժեթղթերի՝ 508,372 հազ. ՀՀ դրամ կամ 15.5%, Վճարվելիք գումարների՝ 45,494 հազ. ՀՀ դրամ կամ 348.1% և Այլ պարտավորությունների՝ 155,182 հազ. ՀՀ դրամ կամ 18.2% աճով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Պարտավորությունների նշված ցուցանիշների կտրուկ աճը պայմանավորված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «Զարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միանալու հանգամանքով, որի արդյունքում 30.06.2017 թվականի ժամանակաշրջանի պարտավորությունների մնացորդներն արդեն իսկ ներառում են նաև «Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ-ից ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ին անցած մնացորդները:

31.03.2017 թվականի համեմատ, պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորված է Հաճախորդների նկատմամբ պարտավորությունների՝ 12,555,855 հազ. ՀՀ դրամ կամ 11.7%, Բանկի կողմից թողարկված արժեթղթերի՝ 21,337 հազ. ՀՀ դրամ կամ 0.6% և Այլ պարտավորությունների՝ 488,226 հազ. ՀՀ դրամ կամ 32.7% նվազմամբ:

Ընդհանուր կապիտալ

Հաշվետու եռամսյակի ավարտին Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 34,056,178 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 10,861,047 հազ. ՀՀ դրամով կամ 46.8 %-ով, իսկ 31.03.2017թ. համեմատ՝ 756,886 հազ. ՀՀ դրամով կամ 2.3 %-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Բանկի ընդհանուր կապիտալի աճը պայմանավորված է Կանոնադրական կապիտալի՝ 2,416,150 հազ. ՀՀ դրամ, Էմիսիոն եկամտի՝ 6,083,865 հազ. ՀՀ դրամ համալրմամբ և Բանկի գործունեության արդյունքում ձևավորված շահույթի հաշվին:

Նախորդ եռամսյակի համեմատ Բանկի ընդհանուր կապիտալի աճը պայմանավորված է 2017 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում Բանկի գործունեության արդյունքում ձևավորված եռամսյակային շահույթի հաշվին:

Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտներն աճել են 1,293,812 հազ. ՀՀ դրամով կամ 49.1%-ով՝ կազմելով 3,930,012 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տոկոսային եկամուտների զգալի մասը բաժին է ընկնում Հաճախորդներին տրված վարկերից և փոխառություններից (3,221,606 հազ. ՀՀ դրամ կամ 82%), Պարտքային արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտներին (520,484 հազ. ՀՀ դրամ կամ 13,2%), Ռեպո պայմանագրերից ստացված տոկոսային եկամուտներին (134,732 հազ. ՀՀ դրամ կամ 3.4%) ու Բանկի ընթացիկ հաշիվներից, Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից ստացված տոկոսային եկամուտներին (41,775 հազ. ՀՀ դրամ կամ 1.1%):

Հաշվետու եռամսյակում, Բանկի եկամուտների կազմում կոմիսիոն և այլ վճարումներից ստացված զուտ եկամուտները կազմել են 165,427 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 57,962 հազ. ՀՀ դրամով կամ 53.9 %-ով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է 2017 թվականի երկրորդ եռամսյակի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

հազ. ՀՀ դրամ	2017 թվականի 2-րդ եռամսյակ	2016 թվականի 2-րդ եռամսյակ
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3,930,012	2,636,200
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(2,135,822)	(1,440,081)
Զուտ տոկոսային եկամուտ	**1,734,190**	**1,196,119**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	329,290	254,541
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(163,863)	(147,076)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	**165,427**	**107,465**
Եկամուտ շահաբաժիններից		
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	280,134	167,738
Այլ գործառնական եկամուտ	205,141	103,871
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	(85,998)	(357,888)
Ընդհանուր վարչական ծախսեր	(1,179,077)	(882,781)
Այլ գործառնական ծախսեր	(480,378)	(203,567)
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	**699,439**	**130,957**
Շահութահարկի գծով ծախս	(82,144)	(18,583)
Շահույթ հարկումից հետո	**617,295**	**149,540**

Հաշվետու եռամսյակում Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 2,135,822 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 695,741 հազ. ՀՀ դրամով կամ 48.3%-ով: Տոկոսային ծախսերի զգալի մասը բաժին է ընկնում Հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց կատարված տոկոսային ծախսերին (1,180,772 հազ. ՀՀ դրամ կամ 55.3%), Բանկի ընթացիկ հաշիվների՝ Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդների և վարկերի դիմաց կատարված ծախսերին (826,872 հազ. ՀՀ դրամ կամ 38.7%) և Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց կատարված տոկոսային ծախսերին (73,040 հազ. ՀՀ դրամ կամ 3.4 %):

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի ընդհանուր վարչական ծախսերն ավելացել են 296,296 հազ. ՀՀ դրամով կամ 33.6%-ով՝ կազմելով 1,179,077 հազ. ՀՀ դրամ:

Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ

Հաշվետու եռամսյակի արդյունքներով, Բանկը ձևավորել է 617,295 հազ. ՀՀ դրամի զուտ շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 149,540 հազ. ՀՀ դրամ շահույթի դիմաց:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները՝ բերված տարեկանի, կազմել են՝

ROE (կապիտալի շահութաբերություն)՝ 7.33%

ROA (ակտիվների շահութաբերություն)՝ 1.24%:

Հաշվետու եռամսյակի 617,295 հազ. ՀՀ դրամ շահույթի ձևավորման արդյունքում մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 351 ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 117 ՀՀ դրամի դիմաց:

Ծառայություններ և հաճախորդներ

Հաշվետու եռամսյակում Բանկի վճարահաշվարկային գործառնությունների ծավալները, որոնք իրենց արդյունքներով արտացոլվում են Կոմիսիոն և այլ եկամուտների տեսքով ստացված զուտ եկամուտներում, կազմել են 165,427 հազ. ՀՀ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի՝ 107,465 հազ. ՀՀ դրամի համեմատ: Վճարահաշվարկային գործառնությունների ծավալային աճ ապահովող ծառայություններից է հանդիսանում կոմունալ վճարումների հավաքագրումը, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 599,903 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 4,496,249 հազ. ՀՀ դրամ:

2017թ.-ի երկրորդ եռամսյակի ընթացքում Բանկի հաճախորդների քանակը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 331-ով,իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ՝ 872-ով և կազմել 119,670:

Վճարահաշվարկային գործառնություններ

Միջազգային դրամական փոխանցումներ

Հաշվետու եռամսյակում միջազգային դրամական փոխանցումների համակարգով փոխանցումների ծավալը կազմել է 152,130,130 հազ. ՀՀ դրամին համարժեք գումար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 76,242,325 հազ. ՀՀ դրամին համարժեք գումարի դիմաց:

Պլաստիկ քարտեր

Հաշվետու եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Բանկի ակտիվ գործող պլաստիկ քարտերի թիվն աճել է 14,806 հատով՝ կազմելով 148,531 հատ, որից 96,917-ը բաժին է ընկնում ArCa վճարային քարտերին, 49,987-ը՝ MasterCard և Visa Card միջազգային պլաստիկ քարտերին, 1 1,627-ը՝ Diners Club միջազգային պլաստիկ քարտերին:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

Հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	2017 թվականի 2-րդ եռամսյակ	2016 թվականի 2-րդ եռամսյակ
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	617,295	149,540
Սեփական կապիտալի միջին մեծություն	33,499,407	22,887,595
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	**1.84%**	**0.65%**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	617,295	149,540
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	197,378,163	132,052,690
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	**0.31%**	0.11%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	617,295	149,540
Գործառնական եկամուտ	2,444,892	1,575,193
Զուտ շահույթի մարժա (NPM), %	**25.2%**	**9.5%**
Գործառնական եկամուտ	2,444,892	1,575,193
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	197,378,163	132,052,690
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	**1.24%**	**1.19%**
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	197,378,163	132.052.690
Սեփական կապիտալի միջին մեծություն	33,499,407	22,887,595
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	**5.89**	**5.8**
Զուտ տոկոսային եկամուտ	1,794,190	1,196,119
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	143,297,235	82,733,736
Զուտ տոկոսային մարժա (NIM),%	**1.25%**	**1.4%**
Տոկոսային եկամուտ	3,930,012	2,636,200
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	143,297,235	86,843,470
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն,	**2.7%**	**3.0%**

Տոկոսային ծախսեր	2,135,822	1,440,081
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	102,262,243	67,434,733
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	**2.1%**	**2.1%**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	617,295	149,540
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը, հազ. Հատ	1,760.73	1,277.50
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS), ՀՀ դրամ	**351**	**117**
Սպրեդ, %	**0.7%**	**0.9%**

Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Բանկի հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով և Բանկի տարեկան բյուջեով սահմանված նպատակային թիրախներով և չափանիշներով ու դիտարկվում են հետևյալ ցուցանիշների փոփոխությամբ.

- Բանկի ընդհանուր ակտիվների մնացորդների շարունակական աճի ապահովում՝ հիմնականում վարկային ներդրումների աճի հաշվին,
- ժամկետային ավանդների և ցպահանջ ավանդների մնացորդների փոխարինում ֆինանսական կառույցներից ներգրավվող ցածր ծախսատար միջոցներով,
- Բանկի հաճախորդների թվի շարունակական աճի, ինչպես նաև սպասարկման որակի բարձրացման արդյունքում նախատեսվում է ստացվելիք կոմիսիոն գումարների աճ,
- վճարահաշվարկային ծառայությունների, այդ թվում՝ պլաստիկ քարտերով գործառնությունների ծավալման նպատակով, նախատեսվում է ընդլայնել համագործակցող կազմակերպությունների շրջանակները, ավելացնել Բանկի քարտապանների թիվը, որի ապահովման նպատակով կավելացվի նաև ATM-երի թիվը և տեղաբաշխվածության մակարդակը,
- մասնաճյուղերի գործունեության արդյունավետության բարձրացում,
- եկամտաբեր ակտիվների ծավալների աճի հաշվին տոկոսային եկամուտների աճ,
- Բանկի կողմից միջնորդական և վճարահաշվարկային ծառայությունների աճի հաշվին ոչ տոկոսային եկամուտների աճ, վերը բերված ցուցանիշների աճի դեպքում կարձանագրվի նաև զուտ շահույթի աճ:

Ենթահավելված 7
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

Հավելված 7

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ֆինանսական վիճակի մասին (ձև թիվ7)

«30» հունիսի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթա-գրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (չստուգված)	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (չստուգված)
1	Ակտիվներ			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	29,621,900	48,720,936
1.2	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ			
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	10,243,527	16,498,015
1.4	Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ	15		
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	16	115,320,629	104,879,951
1.6	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	23,854,966	32,846,022
1.7	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	18		
1.8	Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում	19		
1.9	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ		1,952,586	2,068,421
1.10	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	5,060,104	5,323,683
1.11	Հետաձգված հարկային ակտիվներ	3	-	-
1.12	Այլ ակտիվներ	21	5,533,508	5,223,296
	Ընդամենը՝ ակտիվներ		191,587,220	215,560,324
2	Պարտավորություններ			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	57,537,355	55,040,689
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	95,081,854	107,121,932
2.3	Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	24	3,787,803	3,812,886
2.4	Առևտրային նպատակներով պահվող պարտավորություն	25	-	-
2.5	Վճարվելիք գումարներ	26	58,563	59,998
2.6	Հետաձգված հարկային պարտավորություններ	3	106,183	150,946
2.7	Պահուստներ	30		-
2.8	Այլ պարտավորություններ	27	900,630	16,243,261
	Ընդամենը՝ պարտավորություններ		157,472,388	182,429,712
3	Կապիտալ			
3.1	Կանոնադրական կապիտալ	28	8,803,655	8,803,655
3.2	Էմիսիոն եկամուտ	29	8,031,745	8,031,745
3.3	Պահուստներ՝			
3.3.1	Գլխավոր պահուստ	30	3,000,000	2,700,000
3.3.2	Վերագնահատման պահուստներ		1,042,586	866,623
3.4	Չբաշխված շահույթ (վնաս)		13,236,846	12,728,589
3.5	Կապիտալի այլ տարրեր	29		
	Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ			
	Փոքրամասնության բաժնեմաս			
	Ընդամենը՝ կապիտալ		34,114,832	33,130,612
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		191,587,220	215,560,324

Բանկի կառավարման նախագահ ԱԼՈՍՊՅԱՆ

Գլխավոր հաշվապահ Տ.ԳԱԼՍՅԱՆ

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 20-ի թիվ 68 -Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար
2012 թվականի մարտի 29-ի թիվ 292-Ն հրահանգով

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 ա)

«30» հունիսի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ		Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	**3,930,012**	**8,087,433**	**2,636,200**	**5,200,305**
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	**(2,135,822)**	**(4,445,726)**	**(1,440,081)**	**(2,872,065)**
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**1,794,190**	**3,641,707**	**1,196,119**	**2,328,240**
		-		-	
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	**329,290**	**632,919**	**254,541**	**482,278**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	**(163,863)**	**(277,115)**	**(147,076)**	**(262,258)**
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		**165,427**	**355,804**	**107,465**	**220,020**
		-		-	
Եկամուտ շահաբաժիններից		-	-	-	-
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	**280,134**	**716,962**	**167,738**	**347,340**
Այլ գործառնական եկամուտներ	6	**205,141**	**360,752**	**103,871**	**226,984**
Գործառնական եկամուտներ		**485,275**	**1,077,714**	**271,609**	**574,324**
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	**(85,998)**	**(1,081,280)**	**(357,888)**	**(640,863)**
Ընդհանուր վարչական ծախսեր	8	**(1,179,077)**	**(2,368,432)**	**(882,781)**	**(1,758,490)**
Այլ գործառնական ծախսեր	9	**(480,378)**	**(691,614)**	**(203,567)**	**(393,088)**
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս	10	-	-	-	-
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		**699,439**	**933,899**	**130,957**	**330,143**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	**(82,144)**	**(125,642)**	**18,583**	**(3,816)**
Ժամանակաշրջանի շահույթ		**617,295**	**808,257**	**149,540**	**326,327**
Այդ թվում՝					
Մայր կազմակերպության բաժնեմաս					
Չվերահսկվող բաժնեմաս					

Բանկի կառավարման նախագահ ԱՂՈՒՊՅԱՆ

Գլխավոր հաշվապահ ՏԱՊԱՍՅԱՆ

հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 20-ի թիվ 68 -Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար
2012 թվականի մարտի 29-ի թիվ 292-Ն հրահանգով

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 բ)

«30» հունիսի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ		Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ	Նախորդ ժամանակաշրջան
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		**174,489**	**146,636**	**371,115**	**496,528**
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից		-	-	-	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ		**174,489**	**146,636**	**371,115**	**496,528**
Դրամական հոսքերի հեջավորում		-	-	-	-
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ		-	-	-	-
Այլ համապարփակ եկամտի զծով շահութահարկ		**(34,898)**	**(29,327)**	**(74,223)**	**(99,305)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		**139,591**	**117,309**	**296,892**	**397,223**
Համապարփակ ֆինանսական արդյունք		**756,886**	**925,566**	**446,432**	**723,550**
Այդ թվում[a]					
Մայր կազմակերպության բաժնեմաս					
Չվերահսկվող բաժնեմաս					

Բանկի կառավարման նախագահ Ա.ՕՍԻՊՅԱՆ

Գլխավոր հաշվապահ Տ.ԳԱԼՍՏՅԱՆ

Ենթահավելված 8
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

Հավելված 8

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձև թիվ 8)

«30» հունիսի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից	Հայտնաբերված նյութական ֆիզիկական ակտիվների վերագնահատումներ	Դրամական հոսքերի հեջավորում	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումների զ օգուտներ	Շրջանառության շահույթ/վնաս	Միջանցյալ շահութաբաժիններ	Ընդամենը	Չձեռնարկվող բաժնետոմս	Ներդրումային մնացորդը
	Հասարակության հոլովիչ	Հետ գնված հոլովիչ	Ընդամենը											
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)														
1. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2016թ. (ստուգված)	6,387,505	-	6,387,505	1,947,880	1,500,000	-	(202,918)	-	-	12,839,114	-	22,471,581	-	22,471,581
1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2. Վերահաշվարկված մնացորդը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	2,416,150	-	2,416,150	6,083,865	-	-	-	-	-	-	-	8,500,015	-	8,500,015
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	2,416,150	-	2,416,150	6,083,865	-	-		-	-	-	-	8,500,015	-	8,500,015
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
4. Համապարփակ եկամուտ	-	-	-	-	-	-	1,069,541			1,089,475		2,159,016		2,159,016
4.1.Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	-	-	-	-	-	-	-	-	-	1,089,475		1,089,475		1,089,475
4.2.Դուստր ընկերության չբաշխված շահույթ (վնաս)	-	-	-	-	-	-	-	-	-	-		-	-	-
5. Շահութաբաժիններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
5.1.Շահաբաժիններ բաժնետերերին										-		-		-
6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
6.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	-	1,200,000	-	-	-	-	(1,200,000)	-	-	-	-
7.1. Մասհանումներ գլխավոր պահուստին	-	-	-	-	1,200,000	-	-	-	-	(1,200,000)		-	-	-
7.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-		-	-	-	-
7.3. էմիսիոն վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
8. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 31 դեկտեմբերի 2016թ.	8,803,655	-	8,803,655	8,031,745	2,700,000	-	866,623	-	-	12,728,589	-	33,130,612		33,130,612
Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)														
9. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2017թ. (ստուգված)	8,803,655	-	8,803,655	8,031,745	2,700,000	-	866,623	-	-	12,728,589	-	33,130,612	-	33,130,612
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-		-	-	-	-	-	-	-	-	-	-	-
10.Վերահաշվարկված մնացորդը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
12. Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-	-	-	175,963			808,257		984,220	-	984,220
13. Շահութաբաժիններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	-	300,000	-	-	-	-	(300,000)	-	-	-	-
15.1. Մասհանումներ գլխավոր պահուստին	-	-	-	-	300,000	-	-	-	-	(300,000)	-	-	-	-
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.3. էմիսիոն վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
16. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում 30 հունիսի 2017թ. (չստուգված)	8,803,655	-	8,803,655	8,031,745	3,000,000	-	1,042,586	-	-	13,236,846	-	34,114,832	-	34,114,832

Բանկի գլխավոր հաշվապահ _____ Ա.ՍՈՒՊՈՒՆ

Գլխավոր տնտեսագետ _____ Ն.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ենթահավելված 9.1.
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

Հավելված 9.1.

ևնրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (ձև թիվ 9 ա)

«30» հունիսի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
1	2	3
Շահույթ հարկումից առաջ	330,143	933,899
Գործառնական գործունեություն		
Հիմնական միջոցների ամորտիզացիա	196,676	318,892
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	22,677	33,159
Գործառնական գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում	(11,054,627)	(8,367,805)
Գործառնական գործունեությանը վերագրելի այլ պարտավորությունների աճ/(նվազում)	1,625,401	(21,901,778)
Գործառնական գործունեությունից ընդամենը ճշգրտումներ	(8,879,730)	(28,983,633)
Ներդրումային գործունեություն		
Կապիտալ ծախսումներ	(172,999)	(31,968)
Ներդրումներ	(2,278,352)	8,958,367
Ներդրումային գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում	-	-
Ներդրումային գործունեությունից ընդամենը ճշգրտումներ	(2,451,351)	8,926,399
Ֆինանսական գործունեություն		
Փոխառությունների և այլ վճարվելիք գումարների աճ/(նվազում)	1,926,268	(906,244)
Վճարված դիվիդենտներ	-	-
Բաժնետոմսերի վաճառք (հետգնում)	-	-
Ֆինանսական գործունեությանը վերագրելի այլ պարտավորություններիների աճ/(նվազում)	-	(449,963)
Ֆինանսական գործունեությունից ընդամենը ճշգրտումներ	1,926,268	(1,356,207)
Փոխարժեքի տատանումների ազդեցությունը	213,069	(68,533)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակշրջանի վերջին	29,979,693	29,632,148

Բանկի կառավարման նախագահ _____ Ա.ՕՍԻՊՅԱՆ

Գլխավոր հաշվապահ _____ Տ.ԳԱԼՍՏՅԱՆ

(եռամսյակային)

ՀՐԱՊԱՐԱԿԿՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
4/1/2017 թ-ից 30/06/17 թ.

(հազ. դրամ)

Նորմատիվներ	Փաստացի մեծություն	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	*2*	*3*	*4*
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	8,803,655	50,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	31,642,379	30,000,000	Խախտում առկա չէ
$Ն_1$ Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	16.89%	min12%	Խախտում առկա չէ
$Ն_2^1$ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	32.72%	min15%	Խախտում առկա չէ
$Ն_2^{11}$ Բանկի առաջին խմբի արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	14.81%	min4%	Խախտում առկա չէ
$Ն_2^2$ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	135.16%	min60%	Խախտում առկա չէ
$Ն_2^{21}$ Բանկի առաջին խմբի արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթով արտահայտված ցպահանջ պարտավորությունների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	66.84%	min10%	Խախտում առկա չէ
$Ն_3^1$ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	13.02%	max20%	Խախտում առկա չէ
$Ն_3^2$ Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	87.35%	max500%	Խախտում առկա չէ
$Ն_4^1$ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	0.75%	max5%	Խախտում առկա չէ
$Ն_4^2$ Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	4.84%	max20%	Խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը՝ ՀՀ դրամով,	2.60%	min2%	Խախտում առկա չէ
ԱՄՆ դոլարով,	18.00%	min18%	Խախտում առկա չէ
Եվրոյով	18.00%	min18%	Խախտում առկա չէ
Արտաժութային դիրքի և ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը	0.92%	max10%	Խախտում առկա չէ
Ըստ առանձին արտաժույթների յուրաքանչյուր արտարժույթի բաց դիրքի և ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը՝ ԱՄՆ դոլարով,	0.00%	max7%	Խախտում առկա չէ
Եվրոյով,	0.00%	max7%	Խախտում առկա չէ
Ռուսական ռուբլիով,	0.00%	max7%	Խախտում առկա չէ
Այլ արտարժույթ	0.00%	max7%	Խախտում առկա չէ

Բանկի կառավարման նախագահ _____ Ա.ՕՍԻՊՅԱՆ

Գլխավոր հաշվապահ _____ Տ.ԳԱՐՍԵՎԱՆ